բաժնուած էին ընկերներէն. և այլ հինգն՝ պանդխ-
տութեան միջոց վախճանած... Ինն տարիէ վերջը
1685 ին, Հրաշագործ պատկերը Իլվովի մայր եկե-
ղեցւոյ մէջ կը զետեղեն, և Եղբայրութիւն մի կը
հաստատեն Ս. Նիկոլայոսի անուամբ։ Եղբայրու-
թեանս մատեանները կարգաւորեալ ձևով գրուած
են և ցարդ կը պահուին եկեղեցւոյ դիւանին մէջ։
Երբ Տաճիկ կառավարութիւնն ձեռքը կը քաշէ
Կամենիցէ, Եղբայրութեանս հոգաբարձու քահա-
նայք՝ Ոնոփրիոս Ալանովիչ և Ստեփան Բարու-
քովիչ՝ կը բերեն Աստուածամօր պատկերը, 22
մայիսի 1700, մեծահանդէս թափօրով, և կը զե-
տեղեն Ս. Ստեփանոս մատրան մէջ, զոր առ ժա-
մանակեայ կը յարդարեն Ս. Նիկոլ եկեղեցւոյ զան-
գակատան ստորին յարկին մէջ. վասն զի նոյն
ատեն Հայոց երկու եկեղեցիքն ևս աւեր վիճակի
մէջ էին։ Կը գտնուի նոր բարերար մի, Պոկտան
Լատինովիչ, որ շուտով նորոգել կու տայ Աստուա-
ծամօր Աւետման մատուռը և կարևոր սպասները
կը հայթայթէ։ Աստ կը մնայ Տիրամօր Հրաշագործ
պատկերը, մինչև որ Նորոգի Աքանչելագործ հայ-
բապետին եկեղեցին 1767 »։ « Յամի տեառն 1767,
օրն 22 օգոստոսի, եղև բերումն թափօրով Հրա-
շագործ պատկերին երանուհւոյ կուսին, 'ի նոյն
եկեղեցին.» կը ծանուցանէ հին ճաշոցին նոր
յիշատակարանը. և այդ Ս. Նիկոլայոս եկեղեցւոյն
մէջ մինչև ցայսօր կը պաշտուի 'ի բազմախուռն
ժողովրդոց Տիրամայրս Հայոց։ Բաց 'ի սովորական
ջերմեռանդութեանց և ուխտաւորեայ վերափոխման
տօնին ցնծութեանց, տարւոյն մէջ բոլոր շաբաթ
օրերը նուիրեալ են Աստուածամօրս պաշտման,
և միշտ խուռն բազմութիւն կը ժողովի նոյն օրերը